

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՎԱԳ ՔԱՇԱՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

ԿԱՆԱԶ ԿԻՐԱՎԿԻՒՆ

(14 ապրիլի 2002 թ.)

«Յանուն Նօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամէն»:

Միրեկի հավատացյալ եղբայրներ և քույրեր.

Նախքան քարոզիս անցնելը սրբի ամկեղծ պարտականություն եմ համարում խորին շնորհակալություն հայտնել Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ կրկին անզամ ինձի շնորհել է այս առիթը Սրբազն Պարարագ մասուցելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Տարիներ առաջ շատ ավելի հաճախ կայցելելի և ինձի համար մեծ հուզմունք է երկար բացակայությունից հետո կրկին անզամ կանգնել այս Ս. Սեղանի վրա և Սրբազն Պարարագ մասուցել:

Տայարանայց Առաքելական Ս. Եկեղեցին յուրահավուկ է: այն իմաստով, որ Զարդիկին հաջորդող կիրակիներին դայիս է շատ որոշիչ անվանումներ՝ Նոր կիրակի, և այսօր Կանաչ կիրակի, հաջորդ կիրակին կը ուշի Կարմիր կիրակի: Դրա համար է մեր Հայութը երբեմն այս կիրակիներին կոչում են գունագեղ կիրակիներ, որովհետք գույները իրենց խորհուրդներն ունեն. սպիրակը, որ խորհրդանիշն է նորի, կանաչը, որ խորհրդանիշն է վերազարդումի, և կարմիրը, որ խորհրդանիշն է պայքարի:

Երբ որ Քրիստոս հարություն առավ, առաջաներին թելադրեց և նրանց միջոցով իհմնեց Եկեղեցին, որի անդամն ենք դառնում հավափով: Հովհաննեսի Ավելքարանի այսօրվա ընթերցվածում պարմվում է, թե ինչպես Նիկողեմոս անունով մի իշխան մոփենում է Հիսուսին և ուզում է անդամ դառնալ Իր քարոզության, Իր վարդապետության, Իր առաքելության: Եվ Հիսոս նրան շատ պարզ պայման է առաջադրում, թելադրանք է անում. «Եթե ուզում ես,- ասում է,- ինձ ծառայել, եթե ուզում ես իմ վարդապետության հետքնել, պետք է ծնվես, նորից պետք է ծնվես»: Եվ քրիստոնեական Եկեղեցին, սիրելի եղբայրներ և քույրեր, հենց այդ առիթը դպից մարդուն: Երբ որ Եկեղեցին սրելողվեց, ամեն մարդ սկսեց անդամ դառնալ այդ Հաստաքության՝ շնորհիվ հոգևոր մկրտության:

Մարդ երկու անգամ է ծնվում. մի անգամ ծնվում է իր մարդկային ծնունդով, իսկ երկրորդ անգամ՝ հոգևոր ծննդյամբ: Խսկ հոգևոր ծնունդը լինում է հավաքով: Հավաքըն է, որ մարդուն պահանջում է վերաքննել իր եւթյունը, վերասփեղծել իրեն ավելի լավ, ավելի բարի, ավելի վայել: Եվ դրա համար է մեր ժողովուրդը Նիկողեմոսի պես սրանից 1700 վարի առաջ իրեն նվիրեց Հիսուսին, վերսպեղծեց իրեն՝ ընդունե-

լով Ավելարանի պարզամը և դառնալով աշխարհի առաջին քրիստոնյա ժողովուրդը: Եվ մենք հավագրով, հույսով և սիրով մեր նախնինների հավաքարմության շնորհիվ պահել ենք մեր հավագրը, պահել ենք մեր սերը և պահել ենք մեր հույսը Ավելարանի վրա: Ուստի ես կուգեի, սիրելի եղբայրներ և քույրեր, անդրադառնա մի շար գեղեցիկ պարզամի, որը կամփուին իմ մրածումները շար ավելի լավ:

1892 թ. Խորիմյան Հայրիկն ընդրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս և Հայրապետական անդրանիկ կոնդակի մեջ շար գեղեցիկ պարզամներ է փայլս իր հավագրայալ հորին: Առաջին պարզամն այսպիս է սկսում. «Որդի՛ մարդոյ, դես կացուցի զքեզ ի վերայ դանդ Հայոց և Ռումի՝ վարապեալ հորին Սրբոյն Գրիգորի, ահա թեզ ժամ, երթ Վճարեա զպարպիս քո»: Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդրվելոց հետո Խորիմյան Հայրիկը Ասքծուն դիմում է, Ասքծուն աղոթում է, որ «Դու,- ասում է.- ինձի ծանակեցիր հովիկ այս վարապյալ հորի վրա: Դիմա իմ պարտականությունն է գնալ և իմ պարպիս կապարել»:

Ամեն մենք, սիրելի եղբայրներ և քույրեր, պարզը ունենք կապարելիք հանդեպ այս Հասկապության, հանդեպ մեր հավագրի: Եվ Խորիմյան Հայրիկը շար գեղեցիկ կերպով է այդ պարտականությունը բանաձևում: Այդ պարտականությունը նախ ընկնում է հովիկի վրա, բայց անշուշդ՝ նաև իր հորի վրա: Եվ հետո շարունակում է իր պարզամը այսպես. ինչը՝ պետք է հավաքարիմ լինել՝ «ի հաւաքս Առաքելական Եկեղեցւոյս Հայապանեայց, որոյ իման Թաղէոս և Բարդուղիմեոս առաքեալքն ենդին, և ողջն շինուածն, ած ի կապար ի Սուրբ Գրիգոր Լուսատոք»: Որեմն Խորիմյան Հայրիկն ասում է՝ պարտավոր եք հավաքարիմ մնալ այն հասկապության, որի հիմքերը Թաղեոս և Բարդուղիմեոս առաքյալները դրեցին, որա համար է մեր Եկեղեցին Առաքելական: Իսկ այդ գործունեությունը, որ երկու առաքյալները սկսեցին, Գրիգոր Լուսավորիչն ի կապարի հասցրեց, լրացրեց, Հայոց Եկեղեցին սփացավ գոյն և նկարագիր:

Եվ հետո Խորիմյան Հայրիկը խնդրում է իր ընթերցողներից և նաև իր հորի անդամներից՝ «հավաքարիմ մնալ այդ Դիմին և պինդ պահել «զաւանդութիւնս մեր նախնի սուրբ հարց, զգուշանալ և շիրամափել զցանկն հայրենն»: Շար կարևոր պարզամ է: Հավաքարիմ մնալու հետ անհրաժեշտ է, Կաթողիկոսն ասում է, հավաքարիմ մնալ այդ հիմքերին, որ մեզի ավանդվել է մեր Հայրապետների կողմից, շխախտել, շխանգարել մեր ավանդությունները, որովհետք այդ ավանդություններն են, որ յուրաքանչյուր ժողովրդի և յուրաքանչյուր Եկեղեցու փայլս են իր նկարագիրը:

Հարյուրավոր ազգեր կան աշխարհի մեջ, որոնք քրիստոնյա են դարձել: Բայց մենք քարքերկում ենք մյուս քրիստոնյաներից, մյուս քրիստոնեական Եկեղեցիներից, որովհետք ունենք մեր ինքնուրույն ձևը հավաքալու Ասքծուն, ինքնուրույն ձևը այդ հավաքըն արդահայդելու:

Եվ շար կարևոր է վերջին պարզամը՝ «Զորավիզ լինիշիք ինձ», - ասում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Խոսքը ձեր մասին է: Դուք, որպես հորի անդամներ, պարտավոր եք զորավիզ լինել մեր Եկեղեցու պետքերին, մեր Եկեղեցու մեծերին: Այն-

պես, ինչպես Սիմոն Կյուրենացին, ասում է Խրիմյան Կաթողիկոսը: Եթե որ Շխուս Խաչը փառում էր Գողգոթա, Սիմոն Կյուրենացի անունով մի անձ մովենում է և Շխուսի փոխարեն խաչը վերցնում և բարձրացնում է Գողգոթա: Եվ Խրիմյան Հայրիկն ասում է. «Որպեսզի ես կարողանամ հայ ժողովրդի Խաչը բարձրացնել, առաջ փառել, դուք էլ Սիմոն Կյուրենացու պես պեսք է զորավիզ լինեք ինձի»:

Շաբ կարևոր և հիմնավոր պարզամ է: Ամեն մեկս անդամ ենք այս Եկեղեցվո և ամեն մեկս կարիքն ունենք վերանորոգումի, վերազարթումի: Եվ դրա համար պարզավոր ենք, սիրելի Եղբայրներ և քոյլեր, ոչ միայն հավատքալ, ոչ միայն ասել՝ քրիստոնյա ենք, այլև այդ հավատքին պաշտպան կանգնեն: Եվ դրա համար փաստերի կարիք չունենք, որովհենքու հաջորդ կիրակին, որ Կարմիր կիրակին է, փառավոր կերպով ցոյց կու փա, թե ինչպես հայ հավատքացալներն իրենց արյունի գնով փեր են կանգնել իրենց հավատքին:

Եվ այսօր, սիրելի Եղբայրներ և քոյլեր, մինչև 1991 թ. Հայոց Առաքելական Եկեղեցին 70-75 փարի գտնվեց սովորական կարգավիճակի փակ: Եվ շաբերդ արքասահմանի մեջ արդեն Հայ Եկեղեցու կործանումը համարել էին ամբողջական: Հայեր կային դուրսը, որոնք չեն հավատում, որ Հայոց Եկեղեցին կարող է դիմանալ այդ 75 փարիների նման քաղաքականությանը և դուրս գալ վերանորոգված: Սակայն ամեն մեկդ ձեր հավատքը պահեցիք ձեր արյան գնուվ: Եվ շաբ քիչ ժողովուրդներ կան, որ կարող են այդպես համարձակորեն և պարմականորեն ասել, որ այդպես են եղել:

Սիրելի Եղբայրներ և քոյլեր, ամեն մեկս Նիկողեմոսի պես, երեսմն, մենք մեզի պեսք է այդ հարցը փանք՝ ի՞նչ է նշանակում Քրիստոսին հետքել, ի՞նչ է Քրիստոս պահանջում մեզմից իրեն հետքելու համար. Վերանորոգում, Վերազարթում: Եվ վերազարթում, վերանորոգում ոչ թե ֆիզիկական իմաստով, այլ հոգևոր իմաստով:

Իմ համեսդ մաղթանքն է և աղոթքն է, որ դուք՝ ամեն մեկդ հավատարիմ մնաք Հայաստանյաց Առաքելական Եկեղեցվո ավանդություններին, այնպես, ինչպես Խրիմյան Հայրիկը խնդրում է, և դրանով նաև ապահոված կլինենք Հայոց Եկեղեցվո հավերժությունը, այժմ և միշտ և հավիրյանս հավիրենից. ամեն: